



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ**

**ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**1997-2001ԹԹ.**

Ժակ Մանուկյան -պ.գ.թ.

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ռազմաքաղաքական հարաբերություններում 1997 թվականը կարևորվեց մի շարք իրադարձություններով: 1997թ. մարտի վերջին Մոսկվայում տեղի ունեցած ԱՊՀ պետությունների ղեկավարների հերթական գագաթնաժողովի օրերին ՀՀ-ի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հանդիպեց ՌԴ-ի նախագահ Բորիս Ելցինի, Դաշնային խորհրդի նախագահ Ե. Ստրոևի, Անվտանգության խորհրդի քարտուղար Ի. Ռիբկինի և արտգործնախարար Ե. Պրիմակովի հետ: Բանակցությունների ընթացքում ընդգծվեց ռազմավարական համագործակցության հետագա զարգացման և ընդլայնման անհրաժեշտությունը: Նշվեց նաև, որ երկու երկրների տնտեսական, քաղաքական, գիտամշակութային բնագավառներում համագործակցության հնարավորությունները դեռ լրիվ չէին օգտագործվում: Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց ՀՀ-ի և ՌԴ-ի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին նոր պայմանագիր կնքելու հրատապ անհրաժեշտությանը<sup>1</sup>: Այդպիսի պայմանագրի կնքումը հնարավորություն էր ստեղծելու հայ-ռուսական հարաբերությունները տեղափոխել որակական նոր փուլ և համեմատաբար ավելի կայուն դարձնել Հարավային Կովկասի անվտանգության ապահովումը: Սակայն երկու երկրների հարաբերություններում 1997թ. սկզբներին որոշակի խնդիրներ էին առաջացել, որոնց լուծման նպատակով էլ նույն թվականի մարտ-ապրիլ ամիսներին աշխատանքային այցով Մոսկվայում էին գտնվում ՀՀ-ի Ազգային Ժողովի մի խումբ պատգամավորներ, վերջիններս հանդիպումներ ունեցան ՌԴ-ի Պետդումայի, ԱՊՀ-ի պաշտպանության, անվտանգության, աշխարհաքաղաքական հարցերով հանձնաժողովներում, ինչպես նաև տարբեր խմբակցություններում: Բանակցությունները հիմնականում ընթանում էին ՌԴ-ի Պետդումայի առաջիկա նիստում ՀՀ-ի տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին միջպետական պայմանագրի վավերացման և ՌԴ-ի կողմից ՀՀ-ին զենքի «չարտոնված» մատակարարումների մասին

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ արխիվ, ց. 3, գ. 115, ք. 19-20:

կայանալիք քննարկումների շուրջ<sup>2</sup>: Այն որոշակի լարվածություն էր առաջացրել Ադրբեջան-ՌԴ հարաբերություններում:

Դեռ 1997թ. փետրվարի 14-ին ՌԴ-ի ԱՊՀ երկրների հետ կապերի գծով նախարար Ամանգելդի Տուլեևը մամուլում հայտարարություն էր արել ՌԴ-ից ՀՀ-ին «չարտոնված» զենք մատակարարելու մասին, ինչն իր հերթին մեծ աղմուկ բարձրացրեց ՌԴ-ի հասարակական-քաղաքական շրջանակներում: Ի հավելումն այդ հայտարարության ՌԴ-ի պաշտպանության նախարար Իգոր Ռոդիոնովը պաշտոնապես հավաստիացրեց, որ իրոք 1994-1996թթ. ՀՀ-ին «ապօրինի» զենք է մատակարարվել: Ըստ երևույթին ՀՀ-ին «չարտոնված» զենք մատակարարելու փաստի շահարկումը ՌԴ-ի կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների միջև ներքին հակասությունների հետևանք էր, երբ վերջիններս Վիկտոր Չեռնոմիրիչի նոր կառավարության ձևավորումից առաջ փորձում էին թուլացնել միմյանց դիրքերը: Արտաքուստ ամեն ինչ անմեղ ձևով կատարվեց. ՌԴ-ի Պետդումայի պաշտպանության հարցերով հանձնաժողովի նախագահ Լև Ռոխլինը այդ մասին հայտարարություն արեց, Ամանգելդի Տուլեևը պաշտպանության նախարարությանը հարցում կատարեց, նախարար Իգոր Ռոդիոնովը ի պատասխան հաստատեց և հարցը հանձնեց զինվորական դատախազություն, որտեղ «մեղադրելու» էին ՌԴ-ի պաշտպանության նախկին նախարար Պավել Գրաչովին<sup>3</sup>:

Չնայած Ա. Տուլեևի կողմից փետրվարի 14-ին արած հայտարարությանը, 1997թ. մարտի 10-ին Բաքվում վերջինիս տեղակալը «Ազադլիգի» թղթակցի հետ կայացած հարցազրույցի ժամանակ հաղորդեց, թե ՀՀ-ին ռուսական զենքի անօրինական մատակարարումների մասին Ա. Տուլեևի հայտարարությունը հիմնված է միայն զանգվածային լրատվամիջոցների հաղորդումների վրա: Փոխնախարարը հաղորդեց, որ Ա. Տուլեևի հայտարարությունը սխալ են համարել, քանի որ ՌԴ-ից ՀՀ զենքի անօրինական փոխադրումն ապացուցող կոնկրետ փաստեր չկան: Բայց մինչ այդ Ա. Տուլեևը «Ազատություն» ռադիոկայանի հայկական խմբագրության թղթակցի հետ զրուցելիս հաղորդել էր, որ ինքը այդ մատակարարումները փաստող ապացույցներ ունի<sup>4</sup>: Իր հերթին ՀՀ-ում ՌԴ-ի արտակարգ և լիազոր դեսպան Անդրեյ Ռեռնովը դեռ մարտի 7-ին անդրադառնալով Ա. Տուլեևի հայտարարությանը ընդգծեց, որ «Ռուսաստանի արտաքին քաղաքականության հարցերով պաշտոնական հայտարարություններ անելու իրավունք ունեն նախագահը, վարչապետը և ԱԳ նախարարը: Այսպիսով մենք ունենք մասնավոր կարծիք, ընդ որում՝ փաստաթղթերով չհիմնավորված»<sup>5</sup>: Իսկ, երբ մարտի 13-ին հայտնի դարձավ, որ ՌԴ-ի պաշտպանության նախարար Ի. Ռոդիոնովը նամակով հաստատել է Ա. Տուլեևի հարցումը՝ ՀՀ-ում ՌԴ-ի դեսպանը հայտարարեց, որ Ի. Ռոդիոնովի նամակը չի

<sup>2</sup> Տե՛ս նուն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս «Ազգ», 14 մարտի 1997:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, 11 մարտի 1997, տե՛ս նաև «Լրագիր», 11 մարտի 1997:

<sup>5</sup> «Հայք», 7 մարտի 1997:

կարող համարել իբրև ՌԳ-ի կառավարության պաշտոնական դիրքորոշման արտահայտություն<sup>6</sup>: Այս ամենը մեկ անգամ ևս վկայում էր ՌԳ-ի իշխանական մարմիններում առկա հակասությունների մասին: Ադրբեջանի իշխանություններն, անմիջապես օգտվելով առիթից, ուժեղացրին հակահայկական քարոզչությունը: Նախագահ Հ. Ալիևը նամակով դիմեց ՌԳ-ի նախագահ Բ. Ելցինին, որով կոչ էր անում ամենայն մանրամասնությամբ քննության առնել ռուսական զենքը ՀՀ առաքելու հարցը, միաժամանակ Ադրբեջանում Ռուսաստանի դեսպանին փոխանցվեց պաշտոնական Բաքվի բողոքի նոտան:

Հարկ է նշել, որ Ադրբեջանն իր հայտարարություններում բացառապես հիմնվում էր Ա. Տուլենի կողմից մամուլում արված ոչ պաշտոնական հայտարարության վրա: Ի պատասխան Ադրբեջանի կողմից հնչեցրած մեղադրանքների, 1997թ. փետրվարի 28-ին ՀՀ ԱԳՆ-ն հանդես եկավ պատասխան հայտարարությամբ, որտեղ նշում էր, որ Ադրբեջանն ինքը ԼԳ-ի հակամարտության գոտում հաստատված հրադադարից ի վեր հետևողականորեն խախտել էր հրադադարը, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևը և ԵԱՀԿ-ի որոշումները: Այսպես, սկսելով սպառազինությունների իսկական մրցավազք, 1993-1995 թթ. Ադրբեջանն ՌԻկրահնայից գնել էր 150 մարտական տանկ՝ երեք խմբաքանակով, և 10 մարտական ինքնաթիռ՝ այս մասին պաշտոնապես ծանուցելով Եվրոպայում սովորական զինված ուժերի պայմանագրի (ԵՍԶՈՒ) անդամ պետություններին: Ի հավելումն՝ ՀՀ ԱԳՆ-ի տրամադրության տակ եղած արժանահավատ աղբյուրներից հայտնի էր դարձել, որ Ադրբեջանը հետագայում գնել էր 12 MIG-21, 4 SU-15, 2 SU-25 մակնիշի մարտական ինքնաթիռ, ինչպես նաև 100 T-55 մակնիշի տանկ՝ այս զնումների մասին այլևս չտեղեկացնելով միջազգային իրավասու շրջաններին: 1994թ. գարնանը հատուկ չվերթով Ադրբեջան էր տեղափոխվել T-62 մարտական տանկերի մեծ թվով պահեստամասեր: 1995թ. վերջերին KOFISA ֆիրմայի միջոցով Ադրբեջանը ձեռք էր բերել լազերային կառավարվող ԴԱԻ ԿԱԵ 500Մ ավիառումբեր և օդ-երկիր հակառադիոլոկացիոն X-25ՄՄ և X-29Մ իրթիռներ: 1996թ. Ադրբեջան էր ուղարկվել ԵՄ-21 տիպի 2600 հրթիռ<sup>7</sup>:

1997թ. ՀՀ ԱԳՆ-ի տվյալներով, ըստ ստորագրված մի պայմանագրի, Ադրբեջանը պատրաստվում էր ստանալ ևս 8 SU-24 ինքնաթիռ և ինքնաթիռային 18 շարժիչ, ինչպես նաև «ՌԻրագան» հրթիռակայանքի հրթիռներ: Ադրբեջանի տանկաշինության բնագավառի հ. 102 գործարանում և ուղղաթիռների շարժիչների հ. 307 գործարանում ներգրավված էին մեծ թվով արտասահմանյան մասնագետներ: Նախապատրաստվում էր «Երկիր-երկիր» տիպի կառավարվող հրթիռների, ինքնաթիռային տուրբո-ռեակտիվ

<sup>6</sup> Տե՛ս «Ազգ», 14 մարտի 1997, տե՛ս նաև «Լրագիր», 14 մարտի 1997:

<sup>7</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 1 մարտի 1997:

շարժիչների, OT-5600 և TIP-9600 մակնիշի ռադիոկայանների համատեղ արտադրության կազմակերպում:

Ադրբեջանի ուժային կառույցների համակարգում աչքի էր ընկնում նաև հատուկ ծառայությունը, որն իր գործընկեր հետախուզությունների աջակցությամբ ստեղծում էր համատեղ ռեզիդենտուրաներ, որոնց աշխատանքը բացառապես ուղղված էր ՀՀ-ի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ:

Ադրբեջանը նաև լուրջ խախտումներ ուներ ԵՍՁՈՒ-ի շրջանակներում: Համաձայն իր իսկ տարածած ծանոթագրերի և ռազմական տեղեկատվության տարեկան փոխանակման միայն 1997թ. փաթեթի, Ադրբեջանն իր սովորական սպառազինությունների երեք կատեգորիաներում (մարտական տանկեր, զրահապատ մեքենաներ և 100 մմ-ից բարձր հրետանային միավորումներ) զգալիորեն գերազանցում էր իր ազգային ծանուցված առավելագույն մակարդակը, մարտական տանկեր՝ 220-ի փոխարեն 285, մարտական զրահամեքենաներ՝ 220-ի փոխարեն 785, հրետանի՝ 285-ի փոխարեն 336<sup>8</sup>:

Մտահոգիչ էր նաև Ադրբեջանի կողմից ռազմական ուժերի ապակայունացնող կուտակումը Նախիջևանում: Միայն մարտական զրահամեքենաների կատեգորիայում, նրա 785 միավորից 428-ը, գումարած ևս 107-ը՝ անվտանգության ուժերում, տեղակայված էին Նախիջևանի տարածքում, այն դեպքում, երբ ողջ Ադրբեջանի տարածքում զրահամեքենաների առավելագույն թույլատրելի մակարդակը 220-ն էր: Ապակայունացնող ռազմական կուտակումներ էին արձանագրվել նաև ԼՂՀ-ի հետ Ադրբեջանի շփման գծի երկայնքով երկու հիմնական կենտրոններից՝ Գյանջա և Զյուրդամիր<sup>9</sup>:

Իր հարցապնդումներից գատ պաշտոնական Բաքուն պահանջեց, որպեսզի ՀՀ-ին փոխանցված ռուսաստանյան զենքն ու ռազմական տեխնիկան վերադարձնել ՌԴ-ին և պատժել մեղավորներին: Ի պատասխան դրան պաշտոնական Երևանը պահանջեց զենքի մատակարարումների հարցը հետաքննել ոչ միայն ՀՀ-ի, այլև Ադրբեջանի պարագայում նույնպես: Մոսկվան պատրաստակամություն հայտնեց քննարկվող հարցը դիտարկել լայն համատեքստում՝ չսահմանափակվելով սոսկ ՀՀ-ին փոխանցված զենքի ու տեխնիկայի հարցի հետաքննությամբ<sup>10</sup>: Ստեղծված խնդիրը քննելու համար ձևավորվեց հայ-ռուս-ադրբեջանական եռակողմ հանձնաժողով:

ՀՀ-ին «չարտոնված» զենքի մատակարարման վերաբերյալ 1997թ. ապրիլի 4-ին Ռուսաստանի Դաշնության Պետդումայում հրավիրվեց նաև դռնփակ նիստ, որի ընթացքում ելույթ ունեցավ Պետդումայի պատգամավոր Գալինա Ստարովոյտովան, նա

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>10</sup> Տե՛ս «Հայոց աշխարհ», 8 մայիսի 1998:

ընդգծեց, որ Լ. Ռոխլինը հակասում է ինքն իրեն, մի կողմից նա նշել էր թե Ռուսաստանի բյուջեից թանկագին նվերներ էին տրվել Անդրկովկասում հակամարտող կողմերից մեկին, մյուս կողմից նա խոսում էր զենքի առք ու վաճառքի մասին: Գ. Ստարովյուտովան նշեց, որ ՌԳ-ի որոշ մարզերից գրահատեխնիկային վերատեղակայում էր կատարվել Անդրկովկասի ՌԳ-ի ռազմական բազաներ<sup>11</sup>:

Բացի վերը նշված խնդիրներից, այդ օրերին Պետդումայում քննարկվեց նաև ՀՀ-ում ռուսական ռազմակայանի տեղակայման մասին պայմանագրի վավերացման հարցը նույնպես: Այս հարցում ևս տեսակետները տարբեր էին, մասնավորապես, Պետդումայի պաշտպանության հանձնաժողովի նախագահի տեղակալ Ն. Բեզբորոդովի կարծիքով պայմանագրի վավերացման դեպքում ՀՀ-Ադրբեջան հնարավոր հակամարտության ժամանակ ՌԳ-ն կարող էր ներքաշվել իր համար անցանկալի պատերազմի մեջ ՀՀ-ի կողմից:

Նա հավաստիացնում էր, որ Ռուսաստանի կողմից ՀՀ-ին զենք մատակարարելու մասին լուրերի տարածումից հետո Պայմանագրի անհապաղ վավերացման դեպքում Ռուսաստանը կկորցնի Ադրբեջանին, որը Ն. Բեզբորոդովի կարծիքով Ռուսաստանի առանցքային դաշնակիցն էր Անդրկովկասում: Պետդումայի պաշտպանության հանձնաժողովի նախագահի տեղակալը անպատակահարմար էր համարում նաև Պետդումայում քննարկել ՌԳ-ի և Ադրբեջանի միջև սահմանային հարցերում համագործակցության մասին ֆեդերալ օրենքի նախագիծը: Փոխարենը առաջարկում էր ՀՀ-ում ռուսական ռազմակայանի մասին պայմանագիրը վավերացնել միայն ՀՀ-ի և Ադրբեջանի միջև հարաբերությունները բարելավելու դեպքում<sup>12</sup>:

Այնուհանդերձ հարկ է նշել, որ ՀՀ-ին ռուսաստանյան զենքի «չարտոնված» մատակարարման վերաբերյալ ՌԳ-ի Պետդումայի պաշտպանության հանձնաժողովի նախագահ, գեներալ Լ. Ռոխլինի, պաշտպանության նախարար Ի. Ռոդիոնովի և ԱՊՀ երկրների հարցերով նախարար Ա. Տուլենի հայտնի հայտարարությունների վերաբերյալ Գումայում արտահայտված ամենատարբեր տեսակետների հետ մեկտեղ ՌԳ-ի Պետդումայի պատգամավորների մեծ մասը այն կարծիքին էր, որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է ՌԳ-ի ռազմավարական գործընկերը և զարմանալի չէր, որ ՀՀ-ին զենքի մատակարարման կապակցությամբ ՌԳ-ի Պետդուման ընդունեց մի փաստաթուղթ, որում նշվեց, որ զենքի մատակարարման վերաբերյալ որոշում ընդունելուց խախտվել են ընդամենը ձևական ընթացակարգերը<sup>13</sup>:

ՀՀ-ին «չարտոնված» զենք մատակարարելու կապակցությամբ ռուսաստանյան որոշ լրատվական միջոցներում բարձրացված մեծ աղմուկի հիմնական նպատակն էր

<sup>11</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ արխիվ, ց. 6, գ. 107, ք. 52:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 43 հակ. կողմ:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 3, գ. 115, ք. 21:

Պետությունում նախատեսվող ՀՀ-ի տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին միջպետական պայմանագրի վավերացման խափանումը: Չէր բացառվում նաև, որ այն Թուրքիայի և Ադրբեջանի հատուկ ծառայությունների կատարած աշխատանքների հետևանքն էր, որով փորձ էր արվում ՌԳ-ին հեռացնել ԼՂ-ի հակամարտության կարգավորման գործընթացից, ավելի ակտիվորեն դրա մեջ ներգրավելու համար իրենց արևմտյան գործընկերներին և Թուրքիային: Չնայած դրան, 1997 թ. ապրիլի 18-ին ՌԳ-ի Պետության 370 կողմ, 5 դեմ, 1 ձեռնպահ ձայներով վավերացրեց ՀՀ-ի տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագիրը, որը ստորագրվել էր դեռ 1995թ.<sup>14</sup>:

ՀՀ-ՌԳ ռազմաքաղաքական հարաբերությունների սերտացման առումով չափազանց կարևոր էր 1997թ. օգոստոսի 29-ին ստորագրված ՀՀ-ի և ՌԳ-ի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը: Այս պայմանագրով կողմերը խորացնում են համագործակցությունը ոչ միայն ռազմաքաղաքական, այլև տնտեսական և գիտամշակութային բնագավառներում նույնպես: Պայմանագրով նախատեսված է, որ երկու երկրները միմյանց հետ սերտորեն կհամագործակցեն ՀՀ-ի և ՌԳ-ի ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության պաշտպանության և անվտանգության ապահովման գործում (հոդ. 2)<sup>15</sup>:

1998թ. հունվարի 23-ին Ռուսաստանի Պետական դումայի պատգամավորները գործնականում միաձայն վավերացրին ՌԳ-ի և ՀՀ-ի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը: ՌԻշագրավ էր, որ նույն օրը Պետության վավերացրեց նաև ՌԳ-ի և Ադրբեջանի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության պայմանագիրը: Դրանով Պետության փորձում էր պահպանել հավասարակշռությունը ՀՀ-ի և Ադրբեջանի հետ հարաբերություններում:

ՀՀ-ի և Ադրբեջանի հետ ՌԳ-ի ստորագրած պայմանագրերի տեքստերը ներկայացրած ՌԳ-ի նախագահի պաշտոնական ներկայացուցիչ, փոխարտգործնախարար Բորիս Պաստուխովը և ԱՊՀ գործերի հանձնաժողովի նախագահ Գեորգի Տիխոնովը պատգամավորներին կոչ արեցին քվեարկել երկու փաստաթղթերի օգտին, քանի որ հակառակ դեպքում դա կարող էր Անդրկովկասում հանգեցնել անկայունության խորացմանը և, հնարավոր է, նոր պատերազմի: Զննարկման ընթացքում նշվեց, որ Ռուսաստանի հարաբերությունները Հարավային Կովկասի երկու պետությունների հետ չի կարելի համարել լրիվ նույնական, ուստի չէին կարող սիմետրիկ լինել նաև պայմանագրերը: Մասնավորապես, համագործակցության ռազմական մասը երկու փաստաթղթերում տարբեր էր գրված: Խոսելով ՀՀ-ի հետ ստորագրված

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 22:

<sup>15</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1996-1998թթ.», Երևան, 2002, էջ 409:

պայմանագրի մասին՝ Բ.Պաստուխովը նշեց, որ այն «արտահայտում է միմյանց էլ ավելի մոտ լինելու երկու ժողովուրդների կամքը», «ՀՀ-ն ավելի մոտ է Ռուսաստանի հետ համագործակցությանը», խոստովանեց նա<sup>16</sup>: ՌԳ-ի նախագահի պաշտոնական ներկայացուցիչն ընդգծեց նաև, որ ՀՀ-ի հետ պայմանագրի ստորագրումը «սուր հակազդեցություն հարուցեց մի շարք պետություններում, ամենից առաջ Ադրբեջանում»: Ադրբեջանցի որոշ քաղաքական գործիչներ դրանում տեսնում էին ՌԳ-ի և ՀՀ-ի միջև ռազմական դաշինքի ձևակերպում: Բացի այդ նա նշեց, որ ռազմական համագործակցության մասին հողվածներում ձևակերպումները շատ կշռադատված են: Իմանալով, որ ադրբեջանական կողմում կարող էին առարկություններ ծագել, ռուսական կողմը նրան առաջարկել էր պայմանագրում ռազմական մասը կրկնել ՀՀ-ի հետ ստորագրած պայմանագրից: Մակայն Ադրբեջանը հրաժարվել էր դրանից:

Արդյունքում պայմանագրերը որոշ չափով տարբեր ստացվեցին՝ ռուս-ադրբեջանական պայմանագրում դատապարտվում է «անջատողականությունն իր բոլոր դրսևորումներով» և անջատողական շարժումները չպաշտպանելու պարտավորություն է բովանդակում: Կողմերը պարտավորվում են «չմասնակցել ռազմական, տնտեսական և ֆինանսական բնույթի որևիցե գործողության», որն ուղղված կլինի մյուս կողմի դեմ: Կողմերից յուրաքանչյուրը «ճանաչում և հարգում է այն միջոցներն ինքնուրույն որոշելու և իրականացնելու մյուս կողմի իրավունքը, որոնք նպատակամղված են իր ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության և պաշտպանունակության պաշտպանությանը»<sup>17</sup>:

ՀՀ-ի և ՌԳ-ի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը ՀՀ-ում ուժի մեջ մտավ 1998թ. նոյեմբերի 5-ից<sup>18</sup>:

Հայ-ռուսական ռազմաքաղաքական համագործակցությունն ակտիվորեն շարունակվեց նաև 1998թ. ՀՀ-ում տեղի ունեցած արտահերթ նախագահական ընտրություններից հետո:

1998թ. ապրիլի 29-ին ԱՊՀ գագաթնաժողովին մասնակցելու նպատակով Մոսկվա ժամանած ՀՀ-ի նախագահ Ռ.Քոչարյանը հանդիպում ունեցավ ՌԳ-ի նախագահ Բ. Ելցինի հետ: Վերջինս այս հանդիպումը որակեց որպես պատմական<sup>19</sup>: Ռազմաքաղաքական հարաբերությունները խորացնելու նպատակով 1998թ. հուլիսին պաշտոնական այցով ՀՀ ժամանեց ՌԳ-ի պաշտպանության նախարար Ի. Սերգեևը: Այցի ընթացքում Ի.Սերգեևը ընդգծեց, որ Ռուսաստանի ռազմավարական միակ և ամենամեծ հետաքրքրությունը Անդրկովկասում կայունության և խաղաղության ապահովումն է: Երկու

<sup>16</sup> «Ազգ», 24 յունուարի 1998:

<sup>17</sup> Նույն տեղում:

<sup>18</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1996-1998թթ.», էջ 414:

<sup>19</sup> Տե՛ս «Ազգ», 29 ապրիլի 1998:

երկրների միջև ձևավորված փոխադարձ վստահության մասին էր վկայում նաև 1998թ. հուլիսի 20-ին ՌԴ-ի նախագահ Բ. Ելցինի կողմից ստորագրված օրենքը, որով վավերացվեց Մոսկվայի և Երևանի միջև ստորագրված համաձայնագիրը՝ ՀՀ-ի տարածքում ՌԴ-ի զինված ուժերի հանգրվանից դուրս ռուսաստանցի զինվորականների կողմից զենքի գործադրման կարգի մասին, որը նրանց մասնավորապես թույլ է տալիս կրակել անակնկալ հարձակման դեպքում:

Մինչև այդ համաձայնագրի վավերացումը ՌԴ-ի Պետդումայի ԱՊՀ գործերի և հայրենակիցների հետ կապերի հանձնաժողովի փոխնախագահ Ա. Չեխոևը այն անվանել էր «մեծ վստահության պայմանագիր»<sup>20</sup>:

1990-ական թվականների վերջերին միջազգային հարաբերություններում որոշ զարգացումներն որոշակի ազդեցություն ունեցան Ռուսաստանի Հարավկովկասյան քաղաքականության վրա: Թեև ՌԴ-ն տարածաշրջանում պաշտոնապես ամենասերտ հարաբերություններն ուներ ՀՀ-ի հետ, որոնք ամրագրված են 1997թ. օգոստոսի 29-ի հայտնի պայմանագրում, սակայն ՀՀ-ի հանդեպ ՌԴ-ի վարած քաղաքականության որոշ դրվագներ մտահոգության տեղիք էր տալիս: Այսպես՝ Կոստվոյի ճգնաժամի օրերին, Կոստվոյի հարցերով ՌԴ-ի նախագահի անձնական ներկայացուցիչ Վ. Չեռնոմիրոյինը Հարավարևելյան ուղևորվելուց առաջ, խորհրդակցությունների նպատակով, եղավ Բաքվում և Թբիլիսիում, հարկ չհամարելով լինել նաև Երևանում, մտահոգիչ էր նաև 2000թ. հունվարին Ստրասբուրգում տեղի ունեցած հայտնի միջադեպը, երբ ՀՀ-ի Եվրոպայի խորհրդին անդամակցելու հարցը կապվեց Ադրբեյջանի անդամակցության հետ, ռուսական պատվիրակությունը այս հարցում ըստ էության պաշտպանեց թուրքական պատվիրակությանը<sup>21</sup>:

2000թ. Վլադիմիր Պուտինի իշխանության գալուց հետո հայ-ռուսական ռազմաքաղաքական համագործակցությունը թեև շարունակեց զարգանալ, այնուամենայնիվ, Վ.Պուտինը փորձեց հավասարակշռել ՌԴ-ի հարաբերությունները հարավկովկասյան հանրապետությունների հետ:

2001թ. ՀՀ-ի նախագահ Ռոբերտ Բոչարյանի հրավերով պաշտոնական այցով ՀՀ ժամանեց ՌԴ-ի նախագահ Վ. Պուտինը: Թեև այցի նպատակը հիմնականում տնտեսական էր, սակայն ՀՀ-ի և ՌԴ-ի նախագահների բանակցությունների ընթացքում չորջանգվեցին հայ-ռուսական ռազմաքաղաքական համագործակցության հարցերը, մասնավորապես ռազմական և ռազմատեխնիկական բնագավառում համագործակցության խնդիրները, տարածաշրջանի երկրների հետ ՀՀ-ի և ՌԴ-ի փոխհարաբերությունների, տարածաշրջանային կայունության և անվտանգության

<sup>20</sup> Նույն տեղում, 22 յուլիսի 1998:

<sup>21</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ արխիվ, ց.6, գ. 107, թ. 153:



հարցերը, ՆԱՏՕ-ի հետ ունեցած տարածաշրջանի երկրների հարաբերությունների և Կասպից ծովի ջրավազանի նավթային խնդիրները:

Երկու երկրները միակարծիք էին ԱՊՀ-ի հետագա ամրապնդման հարցում և հակված էին շարունակել սերտ համագործակցությունը Հավաքական անվտանգության մասին պայմանագրի շրջանակներում: Բանակցությունների ընթացքում ՀՀ-ի և ՌԳ-ի նախագահները անդրադարձան նաև ԼՂ-ի հակամարտության կարգավորմանը: Այդ առնչությամբ ՌԳ-ի նախագահը նշեց. «Բանակցող կողմերի համաձայնության գալուց հետո միայն Ռուսաստանը կակտիվանա: Մենք կողմնակից ենք հուսալի և արդարացի լուծմանը, իսկ լուծումը՝ Հայաստանի և Ադրբեջանի ձեռքում է: Երաշխավոր ենք այն փոխզիջմանը, որը ձեռնտու կլինի կողմերին»<sup>22</sup>: ՌԳ-ի համար կարևոր էր որպեսզի ԼՂ-ի հակամարտության լուծման հարցում ՀՀ-ն ՌԳ-ին դիտարկեր որպես հարցի լուծման գլխավոր երաշխավորը: Այսպիսով՝ երկու երկրների միջև ձևավորված ռազմաքաղաքական հարաբերությունների շնորհիվ ՀՀ-ն հնարավորություն էր ստանում տարածաշրջանում պահպանել ուժերի հավասարակշռությունը: Իսկ ռուսական ռազմական բազաների ներկայությունը ՀՀ-ում միաժամանակ երաշխիք էր հանդիսանում Թուրքիայի ռազմաքաղաքական նկրտումները զսպելու համար: Մյուս կողմից ՀՀ-ի հետ ռազմավարական գործընկերությունը ՌԳ-ին հնարավորություն էր տալիս ապահովել իր ռազմաքաղաքական ներկայությունը Հարավային Կովկասում, որը չափազանց կարևոր էր նրա համար:

---

<sup>22</sup> Նույն տեղում, գ. 108, թ. 132:

## **РЕЗЮМЕ**

### **ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ В 1997-2001гг.**

Жак Манукян

После распада СССР РА и РФ начали строить отношения между собой путем развития стратегической деятельности. Оба государства активно сотрудничают в областях безопасности внешних границ, противовоздушной обороны и в прочих военно-политических областях.

Новый этап военно-политических отношений между РА и РФ начался 29-ого августа 1997г. после подписания двустороннего договора о дружбе, сотрудничестве и взаимной помощи. Благодаря тесному военно-политическому сотрудничеству с РФ РА получила возможность сохранить баланс сил в регионе, с другой стороны благодаря стратегическому сотрудничеству с РА РФ смогла сохранить свое присутствие на Южном Кавказе, что было для нее чрезвычайно важным обстоятельством.

## **SUMMARY**

### **MILITARY-POLITICAL RELATIONS BETWEEN REPUBLIC OF ARMENIA AND RUSSIAN FEDERATION FROM 1997 TO 2001**

Zhak Manukyan

After collapse of USSR RA and RF started to make relations by the way of development of strategic activity. Both republics cooperate actively in the sphere of external borders security, anti-air defense and other military-political spheres.

New stage of military political relations started between RA and RF on 29th of August 1997, after signing bilateral agreement of friendship, cooperation and, mutual assistance. Due to close military-political cooperation with RF RA had an opportunity to keep balance of forces in the region, on the other hand in virtue of strategic cooperation with RA RF could keep the presence on Southern Caucasus that was for it extremely important reason.